



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-5-10

Թիվ 20/ 156
,, 15 ,, սեպտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ`

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի ղեկավարի կողմից 2020թվականի սեպտեմբերի 15-ի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու մասին ընունված որոշումը :

Առդիր ,, 1 ,, թերթից:

Համայնքի ղեկավար`


Ռ.Մարգարյան




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» սեպտեմբերի 2020 թվականի

N 42 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵՒՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ և 46-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. 2020թվականի հոկտեմբերի 19-ին ժամը 14-30-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանում անցկացնել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ պաշտոն գրադեցնող համայնքային ծառայողների ատեստավորում.

1/ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-3 / ատեստավորումը անցկացնել 2020թ, հոկտեմբերի 19-ին, ժամը 14-30-ին, իսկ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր 3.3-1/ ժամը 15-30-ին Արմավիրի համայնքապետարանի շենքում:

2.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Հովհաննիսյանին ատեստավորման ենթակա համայնքային ծառայողներին ատեստավորումից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացնել ատեստավորման մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

2020թվականի սեպտեմբերի 15
Արմավիր համայնք